

«ՀՈՎՀԱՆՆԵՍ ՏԵՐ-ԴԱՎԹՅԱՆ ԶՈՒՂԱՅՆՅՈՒՆ «ՀԱՇՎԵՏՈՒՄԱՐԸ»: Աշխատասիրությունը Լ. Ս. Խաչիկյանի և Հ. Դ. Փափազյանի, Երևան, ՀՍՄՀ ԳԱ հրատարակչություն, 1984, 424 էջ:

Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի նորաստեղծ «Տնտեսական պատմության վավերագրեր» հայագիտական մատենաշարի խմբագրությունը ընթերցողի սեղանին է գրել իր առաջին գիրքը՝ Հովհաննես Տեր-Դավթյան «Զուգակցություն»-ի և Հ. Փափազյանի աշխատասիրությանը: Դիրքը հիմք է դառնալու հայագիտական նոր մատենաշարի, որը նվիրված է լինելու ինչպես Հայաստանի ու նրա հարևան երկրների՝ Իրանի, Թուրքիայի, Մերձավոր և Միջին արևելքի երկրների, այնպես էլ Ռուսաստանի, Հնդկաստանի, Եվրոպական, ասիական և ամերիկյան մի շարք երկրների սոցիալ-տնտեսական կյանքի ամենատարբեր հարցերին վերաբերող՝ բազմաթիվ հատորների հրատարակությանը: Հրատարակվելիք այս ժողովածուների լույս աշխարհ գալով գիտական լայն շրջանառության մեջ են գրվելու այն հաշվետվածները, ուղեգրությունները, օրագրությունները, առևտրի հետ կապված բազմապիսի վավերագրերը և այլն, որոնք թողել են աշխարհաշրջիկ հայ վաճառական-խոջաները: Հրատարակվելիք նյութը հնարավորություն է տալու նորովի ուսումնասիրել Եվրոպայից Տիրեթ ընկած երկրների սոցիալ-տնտեսական, առևտրական կյանքի պատմության տարբեր կողմերը, այդ երկրների դասերի ու դասակարգային հարաբերությունների հետ առնչվող բազմաթիվ հարցեր: Նշված աղբյուրների մեջ գուցե արժեքավորներից մեկը Տեր-Դավթի որդի Հովհաննես «Զուգակցություն»-ը, Նեպալում և Տիրեթում 1682—1693 թթ. կազմած մանրամասն օրահաշիվ մատյանն է՝ «Ռուզլամայ» և բազմատեսակ ապրանքների վերաբերյալ դուգահեռ հաշիվները՝ «Քաթմաներ»:

«Զուգակցություն»-ը «Հաշվետվածների» ձեռագրերը ինչ-ինչ ճանապարհով հասել են Պորտուգալիա և պահպանվել են Լիսաբոնի ազգային մատենադարանի ձեռագրական բաժնում: Նրա միկրոթապավենները Մատենադարան է ուղարկել Պորտուգալիայի ակադեմիայի թղթակից-անդամ Ռ. Կյուլպենկյանը: Դժվար է եղել «Հաշվետվածների» և «Քաթմաների» բնագրի վերանորոգների աշխատանքը: Գլխից անընթեռնելի, տեղ-տեղ շնչած, ցեցակեր, մոտ երկու տասնյակ լեզուներով գրված, երբեմն առաջին անգամ հանդիպող բազմաթիվ ապրանքների, շափերի, կշռային և ծավալային միավորների անուններ և հարկային, մաքսային տերմիններ ընդգրկող խրթին բնագրերը գիտական տեքստի բերելու համար կազմողներից պահանջվել է 17—18 տարիների (որոշ ընդհատումներով) քրտնաշան, դժվարին աշխատանք:

Ի՞նչ են իրենցից ներկայացնում «Հաշվետվածներ» և «Քաթմաներ», ի՞նչն է դրանց արժեքը, 1682 թ. Նոր Զուգակցում նշանավոր խոջա Գերաքի որդիներ՝ վաճառականներ Ջաքարիայի ու Ըսպրումի և Տեր-Դավթի որդի Հովհաննեսի միջև կնքվում է մի պայմանագիր: Ըստ այդ պայմանագրի Հովհաննեսը վաճառքի համար Հնդկաստան պետք է տաներ 217 թումանի անգլիական մա՛նուդ: 1682 թ. դեկտեմբերի 17-ին Հովհաննեսը դուրս է գալիս Նոր Զուգակցից և, անցնելով Սպահան—Մահլա—Նըղդիսա—Շիրազ—Լառ ուղեգիծը, 48 օրում հասնում է Բանդար Աբրաս և առանց հնդկական որևէ լեզու իմանալու, առանց Հնդկաստանի առևտրի մեթոդներին ծանոթ լինելու մտնում Սուրաթ: Մոտ չորս ամիս նա մնում է այստեղ, ապա սկսվում են առևտրի նըպատակով գրեթե չորս տարի տևած նրա գեղերումները Հնդկաստանի քաղաքներում: Հովհաննես Զուգակցիցի 1686 թ. գալիս է Նեպալ: Երեք ամիս Նեպալի Բհաթգաոն, Քաթմանդու, Փաթան իշխանություններում առևտրական գործարքներ կատարելուց և երկուս ու կես ամիս տառապալից ուղևորությունից հետո նա հասնում է Տիրեթ:

Հովհաննես Զուգակցիցի Տիրեթում եղած շորորդ օտարերկրացին է, որի օրագրությունը և գրառումները հասել են մեզ: Ընդ որում Նեպալի մասին առաջին երեքի՝ Օդորիկոս Ֆրիուլացու, Անտոնիո Անգրիացու և Իոհան Գրյուբերի, հաղորդած տեղեկությունները համառոտ են, մասամբ էլ կասկածելի: Լինելով հոգևորական քառօրյաներ՝ նրանց առաջին հերթին հետաքրքրել է «քրիստոնեական հունձքը»: Ի տարբերություն իր նախորդների, հայ վաճառականը հինդ տարի ապրել է Տիրեթում, գտնվել է երկրի առևտրատնտեսական կյանքի հորձանուտում, յուրացրել է միայն երկրի լեզուն, այլև կենցաղը, սովորությունները, գործ ունեցել ոչ միայն վաճառականների, այլ նաև պետական, հոգևոր գործիչների, քնակչության տարբեր խավերի ներկայացուցիչների հետ և այդ ամենի մասին թողել մանրամասն գրառումներ:

1691 թ. Հովհաննես Զուղայեցին կկած ճանապարհով վերադառնում է Հնդկաստան, ուր շարունակվում են նրա առևտրական գործարքները: 1692 թ. դեկտեմբերի 4-ին Հնդկաստանի Հուդլի բաղաբում ավարտվում են ուղեգրող-վաճառականի գրառումները: Հովհաննես Զուղայեցին իր գրառումներում մանրամասն տեղեկություններ է թողել Հնդկաստանում, նեպալում ու Տիբեթում վաճառվող և ղեկող բազմաթիվ ապրանքների, դրանց տեսականու, արժեքի, չափի, կշռի, ծավալի վերաբերյալ: «Հաշվետումարում» և «Քաթաներում» ուսումնասիրողը հարյուրավոր փաստեր կգտնի Հնդկաստանի, նեպալի և Տիբեթի XVII դ. երկրորդ կեսի սոցիալ-տնտեսական հարաբերությունների, վաճառքի ապրանքներից գանձվող հարկերի, մաքսերի, տուրքերի վերաբերյալ: Աշխատասիրողները հրատարակված բնագրերին կցել են ծավալուն ուսումնասիրություն: Բայց ուր քալլ հետևելով Հնդկաստանում, նեպալում և Տիբեթում հայ վաճառականի ավելի քան տասնամյա թափառումներին և առևտրական գործարքներին՝ նրանք մանրամասնորեն պարզել են, թե Հովհաննես Զուղայեցին և հայ վաճառականները ինչ ապրանքներ էին ներմուծում ու արտահանում այդ երկրներ: Շատ է ընդարձակ այդ ապրանքների տեսականու ցուցակը: Այսպես. միայն հաշվետումարում հաշվվում են 60 տեսակի գործվածքեղեն, 20-ից ավելի համեմունքներ, 15 տեսակ թանկագին քարեր և մետաղներ, բազմաթիվ ու բազմազան ներկեր, զենքեր, զինամթերք, սպասքեղեն, դեղորայք և շատ ու շատ այլ ապրանքներ: Ուսումնասիրողները հնարավորին չափ վերականգնել են այդ ապրանքների տեսականին, հիմնական հատկանիշները և այլն: Հնդկաստանի, նեպալի, Տիբեթի տնտեսության և առևտրի պատմության համար անզուգական այս սկզբնաղբյուրը հազիվ թե լիարժեք լիներ, եթե հաշվետումարի ուսումնասիրողները չկատարեին մեկ այլ մեծարժեք աշխատանք ևս: Երբեմն մտնելով ամենաբարդ մաթեմատիկական հաշվումների մեջ, նրանք կարողացել են պարզել «Հաշվետումարում» հիշատակված ավելի քան հիսուն դրամական միավորների, չափերի, կշիռների, ծավալների արդիական համարժեքը:

Հովհաննես Զուղայեցին ուր էլ որ եղել է, առաջինը հանդիպում է ունեցել տվյալ վայրում մշտական կամ ժամանակավոր հաստատված իր հայրենակիցներին, նրանց օգնությամբ հաճախ կատարել է իր գործարքները: Այդ մասին ևս նա թողել է իր գրառումները, որոնք ընդարձակում են հայկական գաղթօջախների աշխարհագրական քարտեզի մասին մեր պատկերացումները: Հաշվետումարի փաստերից հաստատվում է այն հետաքրքիր իրողությունը, որ հայկական մնայուն գաղթօջախներ են եղել նաև նեպալում ու Տիբեթում, որոնց անդամները XVII դարի կեսերին ակտիվ մասնակցություն են ունեցել այդ երկրների ներքին և արտաքին առևտրում:

Գիտական մեծ արժեք ունի «Հաշվետումարին» կցված «Անձանոթ» և օտար-բառերի ու տերմինների բառարանը: Իր գրառումներում Հովհաննես Զուղայեցին օգտագործել է պարսկերեն, թուրքերեն, արաբերեն, չինարեն, նեպալերեն, տիբեթերեն, լատիներեն, ֆրանսերեն, վրացերեն և հայերեն բարբառային ավելի քան 1600 բառ, տնտեսական հաշվային, հաշվապահական, առևտրական, ֆինանսական և բազմաթիվ այլ տեսակի տերմիններ, տիտղոսներ, պաշտոններ, դրամական, մետրային չափերի, ծավալների, քաշերի անուններ և այլն: Միայն մի շարք լեզուների իմացությունը և Արևելքի առևտրական ու տնտեսական կյանքի խորը ծանոթությունը հնարավոր են դարձրել հաշվետումար գլուխ բերելու այդ շատ քարդ գործը: Բառարանը կազմելիս հարկ է եղել օգտագործել մոտ քսան տարբեր լեզուների բացատրական և արմատական հին ու նոր բառարաններ, հանրագիտարաններ, ժամանակի պատմությանը, տնտեսական հարաբերություններին, առևտրին նվիրված բազմաթիվ ուսումնասիրություններ, օժանդակ բազմաթիվ տղայություններ, ընդ որում ոչ միայն տպագրի, այլ նաև ձեռագրի: Բառերը և տերմինները բացատրելիս բառարանը կազմողները չեն բավարարվել այս կամ այն բառի լոկ համարժեքը տալով: Ներառել են նախ պարզել են տվյալ բառի կամ տերմինի ծագումը, դրա որ լեզվին պատկանելը, բուն իմաստը փոխառյալ լեզվում և այլն, ապա նոր միայն դրա դիմաց տվել բացատրվող բառի կամ տերմինի՝ գիտական գրականության մեջ ընդունված լատինատառ տառադարձությունը և ապա դրա հայերեն համարժեքը:

Բառարանում տեղ գտած բառերի և տերմինների մի զգալի մասը առաջին անգամ թարգմանված և բացատրված է «Հաշվետումարի» բնագրի օգնությամբ: Երբեմն ասվածը հավաստի դարձնելու համար բնագրից մեջ է բերված համապատասխան հատված: Հաշվի առնելով բնագրի բարդությունը, անհրաժեշտ դեպքում բերված հատվածը թարգմանվել է արդի հայերեն: Առանձին դեպքերում բառի և տերմինի բացատրությունը վեր է անվել յուրօրինակ համառոտ ուսումնասիրության: Բերենք օրինակ. «Սէր, պարսկերեն—SIT—քաշի միավորը»: Կարծես թե սպառիչ այս բացատրությունից հետո կազմողները շարունակել են—«40 սէրը հավասար է 1

գիտրի, ուստի սերի քաշը պայմանավորված էր տվյալ վայրի դիտրի քաշով: Թավրիզի սաղաթ գիտրը կամ մանր կշռում է 3 կգ, հետևաբար սէրը հավասար է 141,7 գրամի: Աքրարի կամ Հնդկաստանի գիտրը 25,509 կգ է, այստեղ սէրը հավասար է 637,74 կգ: Ավելի հաճախ կոչվում է «փաթայ սէր», որը կշռում է 850 գր.: Նման ձևով է բացատրված և մեկնաբանված բառերի և տերմինների մեծ մասը: «Հաշվապահական մատյանի բնագրի հրատարակման առաջին փորձը լինելով,— դրել են բառարանի հեղինակները,— այնտեղ ընդգրկված բառերն ու տերմինները մեծ մասամբ առաջին անգամ են մեկնաբանվում... հետևաբար ոչ բոլոր բառերն ու տերմիններն են սպառիչ բացատրություններ ստացել և առավել կամ նվազ չափով կարող են հետադառնալ»:

Բերենք մեր համոզմամբ, մեկ-երկու ճշտում: Այսպես՝ «գարուղան» մոնղոլերենում իրոք նշանակում է՝ «կարգ պաշտպանող պաշտոնյա» և «ոստիկանապետ»: Սակայն Հնդկաստանում «գարուղան» էին անվանում շուկաների այն կառավարիչներին, որոնց վրա դրված էր շուկա մրտնոդ վաճառականներից բազմաթիվ հարկերի և տուրքերի հավաքումը: Այստեղից էլ՝ բնագրում հանդիպող «Դարուղայի խարճ» արտահայտությունը: «Բանշալը» ծանոթագրված է՝ «հացահատիկի վաճառական», «մեծ վաճառական»: Իրականում «բանշալ», «բանշար» Հնդկաստանում է անվանում էին թափառական մանր վաճառականներին: «Գորու» հնդկերենում նշանակում է «ուսուցիչ», «գոսպտիարակ», «խորհրդատու»: Սակայն այստեղ խոսքը վերաբերում է կոնկրետ սիկհական հոգևոր և աշխարհիկ առաջնորդ Գուրուին: Այստեղից էլ պարզ է դառնում, թե ինչու է այն բնագրում հիշվում «Երաշա Գուրու» ձևով: Կարելի է բերել նաև մեկ-երկու նման օրինակ ևս, բայց ոչ ավելին:

Աշխատության մեջ բացակայում են անձնանունների և տեղանունների ծանոթագրությունները: Եթե ընթերցողը կամ ուսումնասիրողը չիմանա թե ո՞վ է բնագրում հանդիպող Հայր Մատուրը կամ Քալալ Մատուրը, գերծակ Թափը կամ դալալ Բիրշուն, Հայր Պողոսը կամ որդի Պողոսը, ապա, հավանաբար, դա որևէ նշանակություն չի ունենա: Բայց այլ բան է տեղանունների, անգամ մեկ անգամ հանդիպող տեղանվան ծանոթագրությունը, որի կարիքը, մեր համոզմամբ, անհրաժեշտ էր, որովհետև գրանով կճշտվեին հայ ուղեգրող-վաճառականի թափառումների աշխարհագրական քարտեզի մանրամասները: Եթե ոչ մասնագետ արևելագետը կարողանա կուսհել, որ բնագրում հանդիպող էկրան՝ Աղրան է, Քշմիրը՝ Կաշմիրը, Փաթմանտուն՝ Կատմանդուն և այլն, ապա համոզված չենք, որ «Հաշվետվումարի» բնագիրը կարգացողը կարող է կուսհել, որ Նարբհունը Նարարադան է և այլն: Չենք կարծում նաև, որ մասնագետն անգամ կարող է գլխի ընկնել, թե ի՞նչ տեղանուն է կամ որտեղ են գտնվում բնագրում հանդիպող Բրվոշը, Գաուը, Փերը, Քասան, Ջլեսները, Ճսլնին և տասնյակ այլ տեղանուններ:

Հարցը լուծել կարող էր աշխատությանը կցված Հ. Տեր-Դավթյանի երթուղիների քարտեզը, սակայն այստեղ գրեթե ոչինչ տեղում չէ: Քարտեզագիրը, որի ազգանունը գրքում չգտանք, անհաշող է գծել ամենից առաջ մեր վաճառականի երթուղիները: Աշխարհագրական տեղանունների մի մասը տրված է այսօրվա հայտնի ձևով և տառադարձություններով, մի քանիսը այնպես, ինչպես տվել է ուղեգիրը, մյուսները՝ ինչպես վերծանել են ուսումնասիրողները:

Ճշգրտման կարիք ունեն մի շարք այլ տեղանուններ, որոնց մասին խոսվում է «Հաշվետվումարի» ուսումնասիրության մեջ: Չինական նշանավոր առևտրաշահ քաղաքը, ուր առևտուր էին անում հայ վաճառականները, կոչվում էր ոչ թե Սի-Նիե, կամ Սինին, այլ Սիաե: Ուսումնասիրողները բնագրում շատ անգամներ հանդիպող «Փաթան» տեղանունը բոլոր գեպքերում ճշտել են «Փաթնա» ձևով և ստացվել է այնպես, որ խոսքը հնդկական առևտրական խոշոր կենտրոն Փաթնայի մասին է: Իրականում որոշ տեղերում ճիշտ է ուղեգրողը. բնագրում խոսքը գնում է իր մեծությամբ Նեպալի երկրորդ քաղաք Փաթանի մասին և այլն:

Ամփոփենք. 1. Խաչիկյանը և 2. Փափաղյանը հրապարակ են հանել ակադեմիական խորությամբ մշակված և մեկնաբանված, Հնդկաստանի, Նեպալի, Տիբեթի ու միջնադարի սոցիալ-տնտեսական, ներքին և արտաքին առևտրի տարբեր կողմերին, այդ ասպարեզում հայ վաճառականների խաղաղած գործուն գերին նվիրված բացառիկ արժեք ունեցող մի գիրք, որը հետադարձում բանալի-ուղեցույց է հանդիսանալու Արևելքի սոցիալ-տնտեսական կյանքի տարբեր հարցերին, առևտրական հարաբերություններին, առևտրական պայմանագրերին, հաշվապահական մատյաններին, արժեթղթերին նվիրված գեղեցիկ չհրատարակված բարդ ու խրթին բնագրերի ուսումնասիրության և հրատարակման համար:

ՌԱՏԻԿ ԱՐԱՆՉԱՄՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու